



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 8 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2014

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստաբար չոր Յիսուս, Կուր ինձ իմաստաբար զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 78

ԱՍՏՈՒԱՃ ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋՆՈՐԳԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Լսեցէք ինչ որ կ'ուսուցանեմ, ով իմ ժողովուրդս, ականջ դրէք ըսելիքներուս:

Մենք մեր զաւակներէն պիտի չպահենք,  
այլ՝ գալիք սերունդներուն պիտի պատմենք  
Տիրոջ հզօր գործերը՝ օրհներգութեան արժանի,  
անոր կատարած սքանչելի գործերը:

Որպէսզի նոր սերունդները իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնեն.  
չմոռնան ինչ որ անկա ըրաւ, այլ՝ անոր պատուէրները գործադրեն:  
Անհնազանդ եւ ապստամբ չըլլան իրենց նախահայրերուն նման.

այն սերունդին՝ որ Աստուծոյ չվստահեցաւ,  
եւ Աստուծոյ հաւատարիմ չեղաւ:

Մոռցան իրենց համար Աստուծոյ ըրածները,  
անոր ցոյց տուած սքանչելի գործերը:

Աստուած անոնց հայրերուն դիմաց հրաշքներ ըրաւ  
ծովը ճեղքեց եւ անոր մէջէն անցուց զանոնք,  
զանոնք առաջնորդեց ցերեկը՝ ամպով, եւ գիշերն ամբողջ՝ կրակի սիւնով:  
Անապատին մէջ ժայռերը ճեղքեց

եւ առատօրէն խմելիք ջուր տուաւ անոնց՝ երկրին խորերէն:  
Բայց անոնք շարունակեցին Աստուծոյ դէմ մեղանչել:

Գիտակցաբար զԱստուած փորձեցին՝  
իրենց ցանկացած կերակուրները ուզելով:

Աստուծոյ դէմ խօսեցաւ, եւ ըսին.  
«Աստուած կրնա՞յ անապատին մէջ ուտելիք տալ»:

Եւ Աստուած վերէն հրաման տուաւ ամպերուն, եւ երկինքին դռները բացաւ,  
եւ որպէս ուտելիք՝ երկինքէն մանանայ տեղացուց երկնային հաց տուաւ անոնց:

Մարդիկ հրեշտակներու հացէն կերան:  
Անոնց վրայ փոշիի առատութեամբ միս տեղացուց:

Անոնք կերան առատօրէն, եւ լիացան  
Աստուած իրենց ցանկացածը տուաւ:

Հակառակ այդ բոլորին, անոնք դարձեալ մեղանչեցին,  
չհաւատացին անոր գործած հրաշքներուն:

#### ՇԱՐԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատարբեր Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնս ես նեղեղոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

#### ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Զրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ**  
✠  
ԵԼԻՅ ԺԶ (16) ԳԼՈՒԽ  
✠

**ՄԱՆԱՆԱՆ ԵՒ ԼՈՐԱՄԱՐԳԻՆԵՐԸ (16:1-36)**

Ըստ երերույթին անմիջական իրենց հետ եղած պաշարը արդեն կը սպառի եւ անօթութեան համար կը փոքնան: Բայց հեղափոխականօրէն այդ փոքունքը ոչ է Մովսէսին ու Մարտինի դէմ է, այլ Աստուծոյ: Եւ ահա այդ փոքունքին իբրեւ պարասխան Աստուած կ'ըսէ. «որ առաօտուն իր փառքը պիտի տեսնեն», ու այդպիսով իմանան որ զիրենք Եգիպտոսէն հանողը Աստուած ինք է: Առաօտուն մանանայով, իսկ իրիկունը լորամարգիներով: Մանանայի պարկերին տակ կայ պարկերացունը եւ նախաճաշակը այն ճշմարիտ հացին, որուն կ'ակնարկէ Քրիստոս (Յովի 6:32-35, 48-52 եւ Ա Կորնթ 10:3-4), որ իր իսկ մարմինն է: Խորքին մէջ այս փոքունքը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ նկարմամբ անվարահոյութիւն: Միւս կողմէ, Աստուած զանոնք կ'ուզէ փորձել տեսնելով անոնց հնազանդութիւնը: Որովհետեւ այդ հնազանդութիւնը եւ Աստուծոյ նկարմամբ վարահոյութիւնը պէք է սերմանուած ու աճած ըլլայ, եթէ չէ Աստուած ինչ ալ որ փայ պիտի փոքնան ու դժգոհին: Հազիւ ուրախութեան խանդավարութեան ալիքը անցնի, դարձեալ պիտի գայ դժգոհութեան ալիքը: Հեղափոխական է, որ երբ կ'ըսէ Աստուած «պիտի փորձեմ զանոնք», արիկա չի նշանակեր թէ Աստուած սկիզբէն չի գիտեր ըլլալիքը, այլ Մովսէսին կը յայտնէ այդ մէկը, որպէսզի ան ալ իր կարգին ժողովուրդին փոխանցէ եւ այդ մէկը դառնայ զգաստացումի եւ ինքնասրբագրումի առիթ:

Հեղափոխական է, որ այսպէս միայն մանանային համար է որ կ'ըսէ Տիրոջ փառքը, լորամարգիներուն համար չէ: Որովհետեւ Աստուած այս մանանայով շատ մը բան կ'ուզէ սորվեցնել:

1. Հաւաքելու օրերը: 6 օրեր հաւաքել, իսկ 7-րդ օրը ոչ: 7-րդ օրուան սուրբ պահելու եւ ամբողջութեամբ Աստուծոյ փրամադրելու իմաստով:
2. Հաւաքելու չափը: Ամէն օրը օրին ըստ չափի, ոչ ատել եւ ոչ պակաս: Իսկ եթէ ատելի պիտի փճանայ: Ասով սորվեցնելու զհաց մեր հանապազորդ փոք մեզ այսօր:
3. Մանանան որպէս երկինքէն իջած հաց, հրեշտակներու հաց: Որովհետեւ վերջ ի վերջոյ Աստուած կ'ուզէ սորվեցնել այս ժողովուրդին, որ այդ երկինքէն իջած հացը եւ հրեշտակներու հացը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ իսկ խօսքը, որուն հրեշտակները մարակարարն են ու հնազանդ այդ խօսքին: Տակաւին, Քրիստոս պիտի ըսէ. «Իմ ուրելիքը այն է որ կարարեմ իմ երկնաւոր Հօրս կամք», որ կը նշանակէ Աստուծոյ խօսքը կարարելը հոգեւոր սնունդ է, ու Աստուծոյ ներկայութեան մէջ ըլլալ:
4. Ի վերջոյ, այդ մանանան ուրիշ բան չէ եթէ ոչ Քրիստոսի մարմինը, ու այդ ճշմարիտ մարմինին ճաշակումը:

Մանանան փայլով Աստուծոյ փառքն է որ պիտի տեսնեն: Իսկ ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ փառքը: Փառքը մէկու մը ընծայուած պարհին է: Անոր իշխանութիւնը ճանչնալ: Աստուծոյ ներկայութիւնը: Ուրեմն, Աստուծոյ փառքը կը նշանակէ Անոր ինքնարայայտման զանազան կերպերը, ինչպէս նաեւ Անոր գործերը: